ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՐԴՅՈՒՆՔԵՐ

ՄԵՂՐԻ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Հունիս 2019

Իրականացնող՝ ՓԳԹ Անահիտ Մկրտչյան

«Համայնքային փոխօգնություն» Սոցիալական ՀԿ ղեկավար

ԵՐԵՎԱՆ, ՀՈՒՆԻՍ 2019

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի «Հանքարդյունաբերության ազդակիր համայնքները՝ ԱՃԹՆ գործընթացի լիարժեք մասնակիցներ» դրամաշնորհային ծրագրի նպատակն է ապահովել ԱՃԹՆ-ի կատարումը քաղաքացիական հասարակության մասնակցության, հասարակական դեբատների անցկացման և հասարակության որոշումների կայացման գործընթացի մասնակցության ապահովմամբ: Որպես ծրագրի թիրախ ընտրված Լոռի, Գեղարքունիք, Սյունիք մարզերի հանքարդյունաբերությանն առնչվող համայնքներից (Լոռու մարզի Ախթալա (+Ճոճկան, Մեծ Այրում), Շնող (+Թեղուտ), Գեղարքունիքի մարզի Սոտք, Սյունիքի մարզի խոշորացված Կապան համայնք (Գեղանուշ) Քաջարան համայնք (+Արծվանիկ, Սյունիք), Մեղրի համայնք (+ Ագարակ) հինգերորդ այցելությունը կազմակերպվել է դեպի Մեղրի խոշորացված համայնքի բնակավայրեր: Տես քարտեզ N1

Քարտեզ 1.Սյունիքի մարզ, Մեղրի խոշորացված համայնք

Սյունիքի մարզի Մեղրի տարածաշրջանը զբաղեցնում է հանրապետության տարածքի 2,2%-ը՝ 660,7 կմ^2: Համայնքը գտնվում է մայրաքաղաքից 370կմ հեռավորության վրա, բարձրությունը ծովի մակերևույթից 600մ է: 2018թ. հունվարի դրությամբ Մեղրի խոշորացված համայնքի բնակչությունը կազմել է 11746 մարդ: Տարածքի 42,6%-ը զբաղեցնում են գյուղատնտեսական նշանակության հողատարածքները, որից 20,4%-ը արոտներ են, 3,6%-ը՝ վարելահողեր, իսկ 74,5%-ը՝ այլ հողատեսքեր[1]:

[1] http://www.meghri.am/Pages/CustomPage/?CustomPageID=722b890c-cc0b-4c5d-bdf2-30fbebab4291

Խիստ կտրտված, մասնատված ռելիեֆով տարածաշրջանն ունի չոր՝ մերձարևադարձայինից (մեղմ ձմեռներով և շոգ ամառներով) մինչև բարձր լեռնային ցուրտ կլիմա: Գերակշռողը բարեխառն ցամաքային կլիման է: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին -1 ^{0}C, հուլիսին՝ 23^{0}C:

Տարածաշրջանի ամենացածր կետը Արաքս գետի և ՀՀ արևելյան սահմանի հատման տեղն է (374մ), իսկ ամենաբարձրը՝ Փառական գագաթը (3826մ):

Հիմնական Մեղրի գետը ձգվում է 36 կմ իր 336,3 կմ^2 ջրհավաք ավազանով: Արաքս թափվող գետերն են Մեղրին, Կարճևանը, Մալևը, Աստազուրը, Նռնաձորը:

Տարածաշրջանում անասնաբուծությունից հատկապես զարգացած է մանր եղջերավոր անասնաբուծությունն ու խոզաբուծությունը:

Համայնքի տարածքով անցնում է «Երևան-Գորիս-Կապան-Մեղրի-Իրան» միջպետական ավտոճանապարհը:

2017 թվականի հունիսի 9 -ին ՀՀ Ազգային Ժողովում ընդունված որոշմամբ Մեղրի խոշորացված համայնքն ընդգրկել է Մեղրի,Ագարակ, Այգեձոր, Գուդեմնիս, Թխկուտ, Լեհվազ, Լիճք Կարճևան , Կուրիս, Նռնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր, Տաշտուն բնակավայրերը (66066, 8հա):

2015թ. տվյալներով Մեղրի բնակավայրի մակերեսը 3 կմ^2 է, իսկ, բնակչությունը՝ 600 մարդ:

Նկար 1. ***Մեղրի բնակավայր***

Խոշորացված համայնքի երկրորդ՝ Ագարակ բնակավայրը գտնվում է Իրանի հետ սահմանից 2-3 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք՝ Արաքս գետի ձախ ափին, մարզկենտրոնից 80 կմ հարավ-արևմուտք: 2015 թվականի դրությամբ մշտական

բնակչությունը կազմել է 4300 մարդ: Բնակավայրը հիմնադրվել է 1949 թ., որպես բանվորական ավան՝ կապված տարածքում օգտակար հանածոների մշակման հետ:

Նկար 2. Ագարակ քաղաք, https://commons.wikimedia.org/w/index.php?curid=26696834

Բնակիչների գերակշռող մասը (հիմնականում տղամարդիկ) աշխատում են «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ում և նրան սպասարկող մանր ձեռնարկություններում:

Մեղրի խոշորացված համայնքի վարչական բյուջեի փաստացի եկամուտները կազմում են 528825,8 (հազ. դրամ), հարկային եկամուտները՝ 69585,7, պաշտոնական տրանսֆերտները՝ 214376,5 (դոտացիա՝ 207521,2, սուբվենցիա 6855,3), հողի օտարումից մուտքերը՝ 24715,9:

Մեղրի խոշորացված համայնքն ունի 2936 տնային տնտեսություն, որոնց 6%-ը ընտանեկան նպաստառու է: Կենսաթոշակառուների քանակը կազմում է բնակչության թվի 22%-ը: Հաշմանդամություն ունեցողները կազմում են բնակչության 4.4% (517մարդ)[2]: Մանրամասնեցված այն բնակավայրերը, որտեղ մենք հարցազրույց ենք վարել սոցիալական ռիսկի խմբերի առումով այս պատկերն ունի՝ Մեղրի բնակավայր 53 սոցիալական նպաստ ստացող և 64 նպաստառու, Ագարակ բնակավայր՝ 34 սոցիալական նպաստ ստացող և 24 նպաստառու, Կարճևան՝ 1 նպաստառու:

[2] http://www.meghri.am/Pages/CustomPage/?CustomPageID=722b890c-cc0b-4c5d-bdf2-30fbebab4291

Ինչ վերաբերում է համայնքային ենթակառուցվածքներին, համայնքի 12 բնակավայրերը միասին ունեն երեք գրադարան, մեկ արվեստի դպրոց, չորս մանկապարտեզ, 10 հանրակրթական դպրոց, մեկ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն: Արհեստագործական ուսումնական հաստատություն և ԲՈՒՀ Մեղրի խոշորացված համայնքը չունի: Մեղրի համայնքի չորս մանկապարտեզների շենքերի վիճակը խիստ անբարեկարգ է, ինչը ոչ միայն նախադպրոցական կրթությունն ու այն ձևավորող միջավայրը դարձնում է խիստ անբավարար, այլև անգամ դրանցում ընդգրկումը շատերի համար դարձնում անհասանելի: Շվանիձոր բնակավայրում նախադպրոցական կրթական հաստատությունն իսպառ բացակայում է:

Համայնքը գազիֆիկացված չէ: Ջրակուտակման ավազաններ չունի, որի պատճառով գյուղատնտեսական եկամուտն ուղղակիորեն կախվածության մեջ է ջրի հասանելիությունից: Սրա պատճառով Նռնաձոր, Ագարակ, Կարճևան, Լեհվազ, Վահրավար բնակավայրերի զգալի հողատարածքների ոչ լիարժեք օգտագործումը անհնար է դարձնում թուզի, նռան, արքայանարինջի, կիվիի, ձիթապտղի համար ամենաբարենպաստ գոտում առավելագույն քանակի պտղաբերության ապահովումը:

Մեղրի խոշորացված համայնքի աշխատուժի հիմնական եկամտի աղբյուրը հանքարդյունաբերության մեջ վարձու աշխատանքն է: Համայնքում տեղակայված «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը» մտնում է ռուսական «Գեո ՊրոՄայնինգ» ընկերությունների խմբի մեջ, որը շահագործում է նաև Սոտքի ոսկու հանքը և Արարատի ոսկու կորզման գործարանը: Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրը (հիմնական արդյունահանվող մետաղներն են պղինձն ու մոլիբդենը) շահագործվում է բաց եղանակով: Բաց հանքը և լցակույտային տնտեսությունը տեղակայված են հիմնականում Մեղրի խոշորացված համայնքի Կարճևան և Կուրիս բնակավայրերի տարածքում՝ հարելով նաև հարակից մյուս բոլոր բնակավայրերին: Հանքաքարի հարստացումը կատարվում է ֆլոտացիոն եղանակով՝ հանքավայրից ներքև (Ագարակ քաղաքում) գործող հարստացուցիչ ֆաբրիկայում: Ագարակ-Մեղրի տարածքում, Մեղրի-Ագարակ ճանապարհի աջակողմյան հատվածի ձորակներում տեղակայված են երեք տարբեր տարողունակություն ունեցող պոչամբարներ:

ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ

Հարցազրույցի նպատակին՝ խոշորացված Մեղրի համայնքի տարբեր բնակավայրերի վրա «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեության սոցիալական ազդեցությունների, բնակչության իրազեկվածության ու ԱՃԹՆ-ի գործընթացում ընդգրկվելու մասնակցային վարքի ձևավորման հնարավորությունների բացահայտումը իրականացնելու համար ընտրվել է խորին հարցազրույցի մեթոդը:

Որպես գործիք ընտրվել է հարցազրույցի ուղեցույցը, որի բաժիններն են.

1. հանքի շահագործման դրական և բացասական սոցիալական ազդեցությունների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը և այն ապահովող տեղեկատվության աղբյուրները
2. ընտրված համայնքների կենսագործունեության վրա հանքի ազդակիր համայնքների օդին, ջրին, հողին հասցված վնասների գնահատականները
3. բնակիչների՝ սեփական իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը հանքի շահագործման վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման հարցերում
4. ԱՃԹՆ գործընթացներում բնակչության ընդգրկվելու հնարավորությունները և հանքի շահագործման հետևանքով առաջացած խնդիրների հաղթահարման վերաբերյալ բնակիչների առաջարկությունները

Որպես հարցման օբյեկտ ընտրվել են Մեղրի խոշորացված համայնքի Մեղրի, Ագարակ, Կարճևան բնակավայրերը: Հարցազրույց վարվել է 24 տնային տնտեսություններում: Հարցազրույց վերցվել է 12 իգական և 12 արական սեռի ներկայացուցչից, հետևյալ տարիքային խմբերից (18-25)՝ 3 տնային տնտեսության ներկայացուցիչ, (26-35)՝ 7, (36-45)՝ 5, (46-55)՝ 6 (56 և ավել)՝ 3:

Հարցազրույցին մասնակցել են մի քանի մասնագիտական խմբերի ներկայացուցիչներ, ինչպես նաև տնային տնտեսուուհիներ և գործազուրկներ:

Նկ. 3 Խորացված հարցազրույցի անցկացում Մեղրի համայնքում

Ծրագրով նախատեսված խորին հարզազրույցը մեզ հնարավորություն տվեց բացահայտելու.

Ա. մարդկանց և բնության վրա հանքի շահագործման սոցիալական ազդեցությունների մասին «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն համայնքին մասնակի տեղեկացմամբ (հանրային լսումներ և քննարկումներ) ներկայացրել է իր գործունեության միայն դրական ազդեցությունները:

Բ. Համայնքի բնակիչների մի մասին աշխատատեղերով ապահովելու դրական փաստին հակոտնյա բնապահպանական նորմերի խախտման և դրանց սոցիալական հետևանքների վերացման հարցում կոմբինատի պասիվությունն ու համայնքի բացակայող պահանջատիրությունը հանգեցրել է հատկապես օդի, ոռոգման ջրի, հողերի ու գյուղատնտեսական արտադրանքի որակի վրա ծանր մետաղներով տարբեր աստիճանների աղտոտման, ուստիև բնակիչների բացասական գնահատականներին:

Գ. սեփական իրավունքների ու դրանք պաշտպանելու ընթացակարգերի մասին բնակիչների ցածր իրազեկվածությունը, հանքի շահագործման իրական վնասների ու հետևանքների հաղթահարման ուղիների վերաբերյալ աղոտ

պատկերացումները Կոմբինատին, որպես համայնքի համար հիմնական եկամտի աղբյուր ապահովողի, երաշխավորում են աշխատանքային ցածր կուլտուրա:

Բնակիչների տեսակետների, գնահատականների, առաջարկությունների և մեր դիտարկումների հիման վրա ձևակերպվել են առաջարկություններ՝ կապված

- համայնքի բնակչությանը հանքի շահագործման ծավալների, ընթացքի և սոցիալական ազդեցությունների գիտական չափումների մասին բոլոր ֆորմալ ճանապարհներով լիարժեք տեղեկատվություն տրամադրելու
- սեփական իրավունքները պաշտպանելու ընթացակարգերի մասին բնակիչների իրազեկվածության բարձրացման
- համայնքի տնտեսապես ակտիվ բնակչության և հատկապես կանանց համար

հանքին այլընտրանքային եկամտի աղբյուրների ստեղծման ռազմավարության և իրականացման պլան կազմելու

- տարածաշրջանում ակտիվորեն գործող մասնագիտական ՀԿ-ների, մասնաճյուղերի ձևավորման խթանման հետ, ինչը կկարողանա ապահովել ԱՃԹՆ-ի գործընթացներին նրանց մասնակցությունը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ԱՌԱՋԻՆ. Հանքի գործունեության դրական և բացասական սոցիալական ազդեցությունների վերաբերյալ բնակչության նախնական տեղեկացվածության մակարդակը և այն ապահովող տեղեկատվության աղբյուրները:

Մարդկանց և բնության վրա հանքի շահագործման ազդեցությունների վերաբերյալ «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից համայնքին նախապես տեղեկացումը իրականացվել է մասնակի (համայնքային ժողովներ և քննարկումներ): Կոմբնատի կողմից տեղեկատվական թերթիկների կամ վերլուծական նյութերի, հաշվետվությունների տրամադրում տեղի չի ունեցել:

Հարցազրույցի մասնակից 24 տնային տնտեսություններից միայն 9-ն է մասնակցել «համայնքային ժողովներին» ու «քննարկումներին»: Մնացածը օգտվել են ոչ ֆորմալ տեղեկատվության աղբյուրներից՝ «ինչ-որ բաներ լսել ենք ուրիշներից, խոսակցություններից»: Ընդորում, նրանք, ովքեր մասնակցել են քննարկումներին, ասում են, որ Կոմբիատն իր գործունեության որևէ բացասական ազդեցության

մասին չի տեղեկացրել: Շեշտը դրվել է աշխատատեղերի տրամադրման, Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ակցիաներով տրամադրվելիք գումարների և մուծված հարկերով համայնքի բարեկեցության ապահովման վրա:

Սակայն, մեր հարցազրույցները բացահայտեցին, որ բացի Կոմբինատի կողմից համայնքին աշխատատեղ տրամադրելու տնային տնտեսությունների մեծ մասի կողմից տրված դրական գնահատականներին, օդի, ոռոգման ջրի մաքրության, գյուղանտեսական նշանակության հողերի քանակի ու որակի հարցերում նրանք էական բացասական ազդեցություններ են նկատել: Տես աղյուսակ 2

Աղյուսակ N2

	Մեծ բացաս. ազդեցություն	Որոշ բացաս. Ազդեցություն	Ոչ մի ազդեցություն	Որոշ դրական ազդեցություն	Մեծ դրական ազդեցություն	Դժվ./պատ.	Ընդամենը
1. Խմելու ջրի մաքրություն	6	7	6	0	0	5	24
2. Օդի մաքրություն	**15**	**9**	0	0	0	0	24
3. Ոռոգման ջրի մաքրություն	**9**	**6**	5	0	0	6	24
4. Բանջարեղենի և մրգի որակ	3	**11**	0	0	0	10	24
5. Համայնքային և միջհամայնքային Ճանապարհների որակ	5	9	0	0	0	10	24
6. Գյուղատնտեսական նշանակու-թյան հողերի քանակ, որակ	**8**	**8**	1	0	0	7	24
7. Աշխատատեղեր	2	1	1	**4**	**12**	4	24
8. Համայնքի խոցելի խմբերի աջակցություն	3	0	5	2	2	12	24

Աղյուսակը փաստում է, որ հարցազրույցի մասնակիցների 66%-ը աշխատատեղերին վերաբերող 7-րդ կետում (աշխատատեղերի տրամադրում) դրական ազդեցություն է նշում, քանի որ Կոմբինատը մոտ հազար տեղացիների ապահովել է աշխատանքով: Հատկապես 2010թ. տվյալներով 292 [3] բնակիչ ունեցող Կարճևանը բողոքել է, որ Կոմբինատն իրենց աշխատատեղեր չի տրամադրում, ինչի վերաբերյալ Կոմբինատի բացատրությունը մեզ հայտնի չէ:

[3] https://www.armstat.am/file/article/marz_10_44.pdf

Բոլոր զրուցակիցների կողմից Ագարակի կոմբինատի գործունեության ազդեցության բացասական գնահատականները կապվում են հողային ծածկույթի խախտման, ուժեղ պայթեցումներից առաջացրած ցնցումներից ճաքող պատերի, վնասակար փոշու առկայության, պոչամբարների ընդլայնման, թափոնների կուտակումների և ջրային ռեսուրսների աղտոտման հետ: Ասվածը ներկայացնենք մասնագետների հիմնավորմամբ:

Դեռևս 2016թ. ԵՊՀ, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի կողմից Մեղրու հինգ շրջաններում («բաց հանքի շրջակա տարածքներ», «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի հարևան տարածքներ», «Դավազամի ակտիվ պոչամբարի շրջակայք», «կիրճ – 2», «կիրճ – 3» պոչամբարներ) իրականացվել է էկոլոգիական ռիսկերի գնահատում՝ աղտոտման գործոնների (*Cf*), աղտոտման աստիճանի (*Cd*) և գեոակումուլյացիայի ցուցանիշի (*I-geo*) և հարստացման գործոնի (*EF*) կիրառմամբ[4]:

Նշված գրեթե բոլոր տարածքներում մասնագետները բացահայտել են Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի գործունեությամբ պայմանավորված Cu, Mo, Pb և Cd ծանր մետաղներով հողի տարբեր աստիճանների աղտոտման փաստեր: Տես Նկար 4



Նկար 4. Տարբեր մետաղների Աղտոտման գործոնի (*Cf*) արժեքները Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի շրջակա տարածքներում[5]

Հողի մեջ նշված մետաղների պարունակությունը խախտում է տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը, հողի միջոցով ծանր մետաղների սննդային

---

[4] Կ. ՂԱԶԱՐՅԱՆ, Հ. ՄՈՎՍԵՍՅԱՆ, Ն. ՂԱԶԱՐՅԱՆ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի շրջակա հողերի միկրոտարրերով աղտոտվածության հետ կապված էկոլոգիական ռիսկերի գնահատումը, **Հայաստանի կենսաբանական հանդես, 4(68), 2016**

[5] Նույնը՝ էջ 71

շղթաների մեջ ընդգրկմամբ բազմաթիվ անհաղթահարելի խրոնիկ հիվանդությունների պատճառ դառնում:

Հատկանշական է, որ Մեղրի համայնքի երեք բնակավայրերի հարցազրույցի մասնակից տնային տնտեսության միջինը ութսուն անդամից և ոչ մեկը չէր մասնակցել առողջության գնահատման որևէ հետազոտության՝ ուղղված հանքի շահագործմամբ իրենց առողջության վրա թողած վնասների բացահայտմանը: Ցավալի էր, որ բնակիչներն այնքան էլ դրանում հետաքրքրված չէին՝ հիմնավորելով, թե «դե հանք է, դա հասկանալի է, բա այդպես պիտի լինի»: Որոշները տեղեկացրին, որ ժամանակ-առ-ժամանակ համայնքում շրջանառվում են առողջության վրա թողած վնասների վերաբերյալ ցուցանիշներ, երբեմն և իրարամերժ թվեր, խոսակցություններ ծավալվում, որոնք իրենց համար այդքան էլ հասկանալի չեն:

Վերադառնալով աղյուսակում 2-ում ներկայացված հարցազրույցի մասնակիցների և գիտնականների կողմից օդին, հողին, ոռոգման ջրին տված բացասական գնահատականներին, նշենք, որ չնայած հատկապես Ագարակի ու Կարճևանի շրջակայքի հողերը գյուղատնտեսական նշանակության չեն, սակայն շատ տնային տնտեսություններ՝ հատկապես կարճևանցի, ունեն տնամերձեր, այգիներ, որոնք իրենց համար եկամտի աղբյուր են և հոգում են ընտանիքի կարիքները: Ուստի, մենք չէինք կարող չանդրադառնալ նրանց այն խոսքերին, որ «այգիներն աստիճանաբար չորանում են, հատկապես տուժում են ծիրանի ծառերը»: Նրանք համոզում ունեն, որ ինչպես «բնակավայրին շատ մոտ լցվող «отвал»-ների պարունակությունն ու դրանցից բարձրացող փոշին է իրենց բույսերին վնասում, այնպես էլ հանքից դուրս եկող ջուրը ընդերք գնալով հետո ուրիշ տեղից դուրս ա գալիս մակերևույթ ու թափվում գետը ու չի կարող չհասնել մեր ոռոգման ջրին նաև արաքսամերձ գյուղատնտեսական նշանակության հողերին»:

Նկար 5.Կարճևան գետը՝ աղտոտված հանքարդյունաբերական հոսքերով

Իհարկե, մենք ձեռնպահ կմնանք սրա մեկնաբանությունից, քանզի այն մասնագիտական ստուգման կարիք ունի:

Եթե անդրադառնանք հանքի սոցիալական ազդեցություններից համայնքային ենթակառուցվածքների վիճակին տված գնահատականին, հատկապես Ագարակ բանվորական ավանի տնային տնտեսությունները բացասական են գնահատել ներհամայնքային կենտրոնական մայրուղին հատող վեցը փոխուղղահայաց ճանապարհների վիճակը: Քանի որ ավանը իր բոլոր մարդկային և տեխնիկական ռեսուրսներով Կոմբինատին սպասարկող սոցիալական համակարգ է, ճանապարհների նորմալ սպասարկումը նույնպես Կոմբինատի հոգսն է:

Մեր հարցազրույցները բացահայտեցին, որ տնային տնտեսությունների մեծ մասի համար նորություն էր կոմբինատի գործունեության սոցիալական բացասական ազդեցությունների կանխարգելմանն ուղղված այնպիսի գործողություններ, ինչպիսիք էին «Թափոնների անվտանգ հեռացումը», «Հատուկ պոլիգոնների ստեղծումը», «Գործող աղբավայրերի բարելավումը», «Աղտոտված տարածքների մաքրումն ու վերականգնումը», «Դեպի ջրային ռեսուրսներ վնասակար նյութերի արտահոսքի նվազեցում, կասեցում, ջրային ռեսուրսների պահպանությունը». «Կեղտաջրերի վերամշակում, կոյուղու համակարգի բարելավումը», «Օդի մաքրության պահպանությունը» «Աղմուկից, վիբրացիայից և ճառագայթահարումից պաշտպանությունը», «Աղտոտված հողի մաքրում, աղտոտող նյութերի վնասազերծումը», «Անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների կենսաբանական ռեսուրսների պահպանությունը», «Տեղեկատվության տարածումը, էկոլոգիական կրթությունը», «Բնակչության առողջական վիճակի զննությունների իրականացումը» և «Անհրաժեշտ բժշկական սարքավորումների տրամադրումն» է:

Այս գործողություններից ուղղակիորեն կախված է իրենց առողջությունը և կոմբինատի հաշվետվողականությունն ու պատասխանատվությունը: Հարցազրույցներից և ոչ մեկի ընթացքում չլսեցինք նշված ուղղություններով վերջին 3-5 տարում համայնքում իրականացված կամ ընթացքի մեջ գտնվող գեթ մեկ ծրագրերի մասին: Հարազրույցներ վարելիս արձանագրեցինք նաև, որ որոշները վախենում էին հանքի հարուցած վնասների մասին բաց խոսել՝ բացատրելով, թե «պետք չի ամեն ինչի մասին խոսել. որոշների բողոքողներից ընտանիքի անդամներին կոմբինատը աշխատանքից ազատել է»:

Մեղրու տարածաշրջանի ավելացված ներքին արդյունքի 80-85%-ը ստեղծվում է հանքարդյունաբերության գործունեության շնորհիվ: Սրան զուգահեռ համաշխարհային շուկայում պղնձի, մոլիբդենի և ոսկու գներից բնակչության կենսագործունեության կախվածությունը համայնքի բնակիչների կյանքը դարձնում է ռիսկային՝ նվազագույնի հասցնելով վաղվա օրվա հանդեպ վստահությունը, խթանելով արտագաղթը:

Անդրադառնալով Մեղրի ազդակիր համայնքի հասարակական կազմակերպությունների ինստիտուտին՝ կարելի է եզրակացնել, որ նրանց կողմից չի իրականացվել հասարակական գնահատում Կոմբինատի գործունեության սոցիալական ազդեցությունների, դրանց կանխարգելման կամ հաղթահարման վերաբերյալ: Մեր թիրախ տնային տնտեսություններից մի քանիսը «մասամբ բավարար» են գնահատել այս ինստիտուտի ակտիվությունը:

Հիշեցնենք, որ ԱՃԹՆ-ի ներդրմամբ ՀԿ սեկտորին մեծ դեր է հատկացված: Հետևաբար, ՀԿ սեկտորի լիարժեք մասնակցության համար անհրաժեշտ է ամրապնդել տեղական ՀԿ-ների հնարավորությունները հանրային վերահսկողություն իրականացնելու հարցում:

ԵՐԿՐՈՐԴ. Սեփական իրավունքների մասին բնակիչների իրազեկվածությունը հանքի շահագործման վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման ուղիների վերաբերյալ

2001 թվականին ընդունված «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքը բնապահպանական վճարներից առանձին տողով հատկացումներ է անում այն

համայնքների բյուջեներում, որոնց տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն[6]:

Բնապահպանական վճարներից ազդակիր համայնքների[7] վարչական և ֆոնդային բյուջեներ մուտքագրվող մասհանումները որպես նպատակային միջոցներ օգտագործվում են այդ համայնքների տարածքում՝ բացառապես բնապահպանական ծրագրերի իրականացման համար:

Ընկերության կողմից պետական բյուջե ամենամյա կատարվող բնապահպանական վճարներից ՏԻՄ-ը ստանում է դոտացիա և իրականացնում ծրագրեր բացառապես բնապահպանական կամ առողջապահական ծրագրերի համար՝ համապատասխանաբար 70% և 30% հարաբերակցությամբ:

Հարցազրույցների ժամանակ մենք բացահայտեցինք, որ բնապահպանական վճարների օգտագործմանը նվիրված օրենքից 24 տնային տնտեսություններից «լիովին» ծանոթ էին 2-ը (ՏԻՄ աշխատակից), «մասամբ»՝ 7-ը: Վերջիններս այն հարցին, թե ինչպիսի օգտակարություն կարող է այդ օրենքը ունենալ համայնքի համար, մի մասը թվեց կանաչապատման և նախադպրոցական կառույցների հարստացված սննդով ապահովելու ծրագրերը, որոնք իրենց համայնքներում իրականացվել են (20 մլն դրամ ծախսվել է կանաչապատման վրա, 1 800 000 նախադպրոցական հաստատությունների հարստացված սննդի մատակարարման վրա):

ԵՐՐՈՐԴ. ԱՃԹՆ գործընթացներում բնակչության ընդգրկվելու հնարավորությունները

ԱՃԹՆ-ի նպատակը ավելի թափանցիկ և հաշվետվողական պետական և գործարար համակարգի ստեղծումն է, հանրային երկխոսության խթանումը՝ դրանով իսկ կողմերի միջև փոխընբռնման երաշխավորումը: ԱՃԹՆ-ի ներդրումը վկայում է ավելի բարձր աստիճանի թափանցիկության ապահովման պարտավորություն ստանձնելու հնարավորության մասին, որից ազդակիր համայնքի բնակիչները

---

[6] ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը Ընդունված է 2001 թվականին **«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին**

[7] «Ազդակիր» են համարվում որևէ ընկերության գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքները

անմասն չեն:

Կոմբինատի ընդհանուր գործունեության վերահսկման, թափանցիկության ապահովման նախաձեռնության, զեկույցների քննարկման, որոշումների կայացման գործընթացներում բնակիչների ներգրավվածությանը վերաբերող հարցին մեղրեցի երեք ազդակիր բնակավայրերի տնային տնտեսությունի 58%-ը կարծիք հայտնեց, որ բոլորովին ներգրավված չեն, 33%-ը տեղյակ չէ, որ կարող էր ներգրավվել: Բնակչության «մասամբ ներգրավվածության» մասին խոսել են ՏԻՄ 3 աշխատակից, այն էլ ի նկատի ունենալով Կոմբինատի ղեկավարության հետ հանդիպումներում ՏԻՄ ղեկավարի մասնակցությունը:

Չնայած մեր հարցազրույցի մասնակիցների կողմից «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեության բացասական հետևանքների մասին խուսափողական պատասխաներին, հարցազրույցի անանունությունը ապահովելու մեր վստահեցումները թույլ տվեցին արձանագրել առաջարկություններ, որոնք մեր կարծիքով արժեքավոր կարող են լինել թե առողջապահության ու բնապահպանության ոլորտի մասնագետների, թե որոշում կայացնողների, թե քաղաքականություն իրականացնողների համար: Դրանք կարող են մեզ հասկանալի դարձնել ինչպես բնակչության կողմից հանքի շահագործման սոցիալական հետևանքներին տված գնահատականները, այնպես էլ լուծումներում նրանց մասնակցության հնարավորությունները:

«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեությունը տեսանելի և իր գործողությունների համար բնակիչների առջև հաշվետու դարձնելու համար ստացել ենք առաջարկությունների այս շարքը՝

ՄԵՂՐԻ

1. Բնակիչներին տրամադրել բաժնետոմսեր՝ դարձնելով նրան հանքի բաժնետեր ուստիև սոցիալական ազդեցությունների համար պատասխանատվություն կիսող
2. Հանքը պետականացնել և կազմակերպել համայնքի համար նոր վերահսկելի անվնաս աշխատանք
3. Տեղական լրատվամիջոցներով և Կոմբինատի ինտերնետ էջով հանրությանը եռամսյակը մեկ իրազեկել հանքի գործունեության ընթացքի մասին

4. Կազմակերպել հանքի շահագործման անկախ ուսումնասիրություն և արդյունքները մատչելի ձևով ներկայացնել բնակչությանը
5. Նմուշարկել համայնքին պատկանող հողերը և հրապարակել արդյունքները
6. Չեզոքացնել Կոմբինատում աշխատողների և բնակչության առողջության վրա բացասական ազդեցությունը՝ առողջապահական ապահովագրությամբ և համայնքի բժշկական հաստատությունները մասնագետներով հագեցնելով
7. Հանքի կողմից մուծվող բնապահպանական հարկի չափը կրկնապատկել, քանզի պատճառած սոցիալական վնասներն անհամեմատելի են մուծվող հարկի չափերի հետ:

ԱԳԱՐԱԿ, ԿԱՐՃԵՎԱՆ

1. Պետական լիազոր մարմնի վերահսկողական գործունեությունը իրականացնել բնակչության (ոչ ՏԻՄ) ներկայացուցիչների մասնակցությամբ, որպեսզի մենք մեր հարցադրումները ուղղենք հանքի ղեկավարությանը և Կոմբինատ-ՏԻՄ ղեկավարություն հանդիպումները չշրջանցեն բնակիչներին
2. Տեղադրել տեսախցիկներ, որպեսզի հնարավոր լինի հետևել, որ դատարկ ապարները որակյալ հողատարածքների վրա չլցնեն
3. Կոմբինատին պատասխանատվության ենթարկել նորմալ փոշենստեցումներ չիրականացնելու և ուժգին պայթեցումներով տների պատերը թուլացնելու համար
4. Կոմբինատի գործունեությունից տուժող բնակչությանը (ոչ միայն աշխատողներին) առողջապահական ապահովագրության տրամադրմամբ վերահսկելի դարձնել առողջությանը վնասող արտանետումների կառավարելիությունը;

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ծրագրով նախատեսված խորին հարզազրույցը մեզ հնարավորություն տվեց ըստ խնդիրների կատարել հետևյալ եզրակացությունները՝

<u>Առաջին,</u> Մարդկանց և բնության վրա հանքի շահագործման սոցիալական ազդեցությունների մասին «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից համայնքին նախապես մասնակի տեղեկացումը (հանրային լսումներ և քննարկումներ) վերաբերել է միայն դրական ազդեցություններին՝ աշխատատեղեր, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ստանձնմամբ տրամադրվելիք

գումարներ և մուծվող բնապահպանական հարկ՝ դրանով իսկ բնակիչների իրազեկվածությունը թողել է անբավարար վիճակում: Սա Կոմբինատի համար շահեկան վիճակ է ապահովել իր գործունեությամբ թողած բացասական ազդեցությունների դեմ բնակիչների պայքարելու առումով:

Երկրորդ, համայնքի բնակիչների մի մասին աշխատատեղերով ապահովելու փաստին հարցազրույցի մասնակիցների մեծ մասի կողմից տված դրական գնահատականներին հակոտնյա բնապահպանական նորմերի խախտման և դրանց սոցիալական հետևանքների վերացման հարցում կոմբինատի պասիվության մասին են խոսում օդի, ոռոգման ջրի մաքրության, հողերի ու գյուղատնտեսական արտադրանքի որակի վրա ծանր մետաղներով տարբեր աստիճանների աղտոտման փաստերին տված բացասական գնահատականները: Գնահատականների սուբյեկտիվության չափը (եթե, իհարկե դա կա) պայմանավորված է ՏԻՄ, Առողջապահության ու Բնապահպանության նախարարություններ օղակների ազդակիր համայնքների բնակչության իրավունքները պաշտպանելու հարցում պատասխանատվության չափի հստակեցման և հաշվետվողականության հետ:

Երրորդ, Հանքարդյունաբերական բիզնեսի եկամուտների և ծախսերի թափանցիկության նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնելու համար հարկավոր է ամրապնդել ՀԿ ինստիտուտը Սյունիքի մարզում, ձևավորել քաղաքացիական հասարակության ակտիվ խմբեր, որոնք կարող են տեղական մակարդակով առաջ մղել ԱՃԹՆ-ի սկզբունքները և ստանդարտները:

Չորրորդ, Սեփական իրավունքների ու դրանք պաշտպանելու ընթացակարգերի մասին բնակիչների ցածր իրազեկվածությունը, հանքի շահագործման իրական վնասների և կանխարգելման և հետևանքների հաղթահարման ուղիների վերաբերյալ աղոտ պատկերացումները Կոմբինատին թույլ են տալիս իր հարցերը լուծել ՏԻՄ ղեկավարության հետ, հաճախ առանց բնակիչների գիտության հավանություններ ստանալ հանքի գործունեությանը վերաբերող որոշումներին:

Հանրային երկխոսության խթանման, թափանցիկության ու հաշվետվողականության ապահովման պարտավորություն ստանձնելու գործընթացներում ընդգրկվելու բնակչության հնարավորությունները թույլ են:

Հինգերորդ, Համայնքում ջրակուտակման ավազանների բացակայությունը ջրային ռեսուրսների կառավարվումը դարձրել է անարդյունավետ, կորուստները մեծ, իսկ

եզակի պտուղների առավելագույն քանակի ստացումը դարձրել դժվար, իսկ Կոմբինատից, որպես միակ եկամտի աղբյուրից բնակչության կախվածությունը համայնքի և առանձին ընտանիքների համար՝ կործանարար:

Ելնելով Մեղրի ազդակիր համայնքում գրանցված ծնունդների և մահացության դեպքերի քանակից (2018թ. տվյալներով համապատասխանաբար 103-96) տարեկան 53 ամուսնացողների հաշվով ամուսնալուծությունների մեծ տոկոսից (22%)՝ կարելի է ենթադրություն անել, որ Մեղրին ծերացող և պոտենցալ արտագաղթողների համայնք է: Որպես երեք կողմից սահմանամերձ և երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջան ընտանիքների ամրությամբ ու ծնունդների ու մահացությունների գրեթե հավասար թվով ու արտագաղթի տեմպերով համայնքի ու երկրի համար ծայրահեղ բացասական պատկեր ունենք:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ականջալուր լինելով բնակչության առաջարկություններին, վերը ներկայացված եզրակացությունների հիման վրա մենք հնարավորություն ունեցանք ձևակերպել հետևյալ առաջարկությունները՝

I «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեության թափացիկության և հաշվետվողականության ապահովման, բնակիչների շրջանում անհրաժեշտ մասնակցային վարք ձևավորելու նպատակով համայնքի բնակչությանը ***բոլոր ֆորմալ ճանապարհներով*** լիարժեք տեղեկատվություն տրամադրել հանքի գործունեության ծավալների, ընթացքի և սոցիալական ազդեցությունների գիտական չափումների մասին:

II Բարձրացնել սեփական իրավունքները պաշտպանելու ***ընթացակարգերի*** մասին բնակիչների իրազեկվածությունը, հստակեցնել հանքի շահագործման վնասների կանխարգելման և սոցիալական բացասական հետևանքների հաղթահարման ուղիների վերաբերյալ պատկերացումները:

III Մշակել ***միջոցառումների պլան***՝ ուղղված հատկապես կանանց համար հանքին այլընտրանքային եկամտի աղբյուրներ ստեղծելուն և այն ներառել ՏԻՄ ռազմավարության մեջ:

IV Հորդորել ՀՀ-ում գործող միջազգային կազակերպություններին և իշխանություններին Մեղրի խոշորացված համայնքի կրթված և ակտիվ բնակիչներին ***<u>օգնել՝ գրանցելու մասնագիտական ՀԿ-ներ</u>***, կամ Երևանում գործողների մասնաճյուղեր, հզորացնել նրանց ինստիտուցիոնալ կարողությունները՝ ԱՃԹՆ-ի ներդրմամբ ՀԿ սեկտորին տրված մեծ դերը ի կատար ածելու համար: